

ստեղծելու նկատմամբ: Մարդկայնության սկզբունքներուն մաս կը կազմեն նաև՝ խղճի ազատութիւնը, հանդուրժողութիւնը եւ բռնութեան ջնջումը:

Վերոյիշեալ՝ «խիղճի»⁽¹⁸⁾, «արժանապատուութեան»⁽¹⁹⁾ եւ «մարդու հիմնական իրաւունքներու»⁽²⁰⁾ մասին, առանձին յօդուածներ կան՝ հիմնական հասկացութիւններու (Մաս – 9) տակ:

Վերածնունդի շրջանին, *Մարդկայնութիւն* շարժումը կը սկսէր Իտալիայէն, այնուհետեւ կը տարածուէր ամբողջ Եւրոպայի մէջ: *Մարդկայնութեան* նշանաւոր ներկայացուցիչներ դարձան հետեւեալ փիլիսոփաները.-

- **Մ. Ֆիչինօ** (իտալ.՝ Marsilio Ficino, 1433 – 1499 թ.), որ Վերածնունդի պլատոնականութեան գլխաւոր ներկայացուցիչն էր.
- **Ճ. Սիրանդոլա** (իտալ.՝ Giovanni Pico Della Mirandola, 1463 – 1496 թ.), որ աշակերտած եւ հետեւած էր Ֆիչինոյի.
- **Երազմոս Ռոտերդամցի** (հոլ.՝ Erasmus Roterodamus, 1465 – 1536 թ.), որ փորձեց մարդկայնութիւնը յարմարեցնել քրիստոնէական ուսմունքին. եւ
- **Մ. Մոնտէյն** (ֆրնս.՝ Michel de Montaigne, 1533 – 1592 թ.), որ կը ներկայացնէ սոյնիցեան կասկածամտութիւնը:



Վերածնունդի բարոյագիտութիւնը

Վերածնունդի շրջանին նոր բարոյագիտութիւն մը կը զարգանար, որ պէտք է համապատասխանէր՝ մէկ կողմէ, ստեղծուած իրաւական նոր պետութիւններուն եւ միւս կողմէ՝ նոր մշակոյթին, ընկերային հասարակութեան եւ գիտական յառաջդիմութեան: Այս պատճառով, Հնադարեան անհատական բարոյագիտութիւնը իր տեղը պիտի տար անելի զօրաւոր ընկերային բարոյագիտութեան մը, որ ուղղուած էր անելի լայն հասարակութեան ու անոր արդարադատութեան: Ասոր կողքին, հնադարեան մարդու անհատական երջանկութեան փոխարէն, կը պահանջուէր պարտաւորութեան սկզբունքի մը իւրացումը՝ մարդուն կողմէ: Այլ խօսքով՝ մարդը իր վարմունքին ամբողջական պատասխանատուութեան կրողը կը դառնար:



(18) **խիղճ** (Conscience) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 472:

(19) **Արժանապատուութիւն** (Dignity) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 410:

(20) **Մարդու հիմնական իրաւունքներ** (Human Rights) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 503: